Ռուսաստանի դաշնության
ֆինանսական աջակցությամբ

Armav AAC հավելվածի կիրառմամբ՝ հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող երեխաների հաղորդակցման մակարդակի բարելավման հաշվետվություն

2023

Փաստաթուղթը մշակվել է Կրթություն և հետազոտություններ հիմնադրամի կողմից, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Հետազոտությունն անցկացրեցին և փաստաթուղթը մշակեցին «Հայալեզու այլընտրանքային հաղորդակցման հավելվածի փորձարկում (AAC App» ծրագրի՝

Գլխավոր փորձագետ՝

Կրթություն և հետազոտություններ հիմնադրամի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արմենուհի Ավագյանը**

Փորձագետ՝

ԵՊԲՀ վերականգնողական բժշկության ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու **Տիգրան Պետրոսյանը**

Մեջբերման համար-

Ավագյան, Ա., Պետրոսյան, S., (2023) Armav AAC հավելվածի կիրառմամբ՝ հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող երեխաների հաղորդակցման մակարդակի բարելավման հաշվետվություն, 30 էջ

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ գործընկերությամբ:

Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված: Հիմնվելով ավելի քան 75 տարվա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար գրեթե 30 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Կրթություն և հետազոտություններ հիմնադրամի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին.

ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14, Երևան 0010, էլ. հասցե՝ yerevan@unicef.org
Կրթություն և հետազոտություններ հիմնադրամ, Նոր Նորքի երկրորդ զանգված, Թոթովենց 11, բն. 51, Երևան, էլ. հասցե՝ avagyan.aspu@gmail.com

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)

© Կրթություն և հետազոտություններ հիմնադրամ

Բովանդակություն

Երախտիքի խոսք	4
Ամփոփոգիր	5
Ներածություն	6
1. Հաղորդակցման մատրիցայի հայերեն տարբերակի պիլոտային կիրառման արդյունքները:	
1.1. Հաղորդակցման մատրիցայի կառուցվածքը	8
1.2 Մատրիցայի հայերեն տարբերակի կիրառումը	12
1.3. Հաղորդակցման պրոֆիլի և գնահատման արդյունքների մեկնաբանումը	18
2. Armav AAC հավելվածի կիրառման դասընթացի ու դրան հաջորդած սուպերվիզիների արդյունավետությունը:	
Եզրակացություն	24
Առաջարկություններ	
Գրականության ցանկ	26
Հավելվածներ	27
Հավելված 1. Աղյուսակների ու գծապատկերների ցանկ	
Հավելված 2.Արմավ դասընթացի և սուպերվիզիաների գնահատման ձևաթուղթ	28 28

Երախտիքի խոսք

Հաշվետվության հեղինակները շնորհակալություն են հայտնում ՅՈՒՆԻՍԵՖԻ հայաստանյան գրասենյակին գործընկերության ու աջակցության համար, Երևանի ու մարզերի ՀՀ ԿԳՄՍ, Առողջապահության և Սոցիալական հարցերի նախարարությունների ենթակայությամբ գործող կազմակերպությունների լոգոպեդներ Անժելա Գաբրիելյանին, Նինա Ասատրյանին, Մերի Պապիկյանին, Նորա Գորոյանին, Սիրանուշ Ֆայլաբաշյանին, Մարիամիկ Ղազարյանին և Սեդա Սանոյանին Հաղորդակցման գնահատման մատրիցան մանրակրկիտ ու պատասխանատվությամբ լրացնելու և տվյալները մեզ փոխանցելու համար: Շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկեր Թալին Աշիքեանին անվերապահ նվիրումի, պրոֆեսիոնալ մոտեցման, դասընթացների ու սուպերվիզիաների մեջ մեծ ավանդի համար:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հաշվետվությունը հիմնվում է վերջինիս համահեղինակ Արմենուհի Ավագյանի կողմից թարգմանված և նախագծի մասնակից 7 մասնագետներին փոխանցված Չերիթի Ռոուլանդի «Հաղորդակցման մատրիցայի» միջոցով հավաքագրված տեղեկատվության վերլուծության վրա: Մատրիցան հնարավորություն է տվել արձանագրելու պրոյեկտում ներգրավված, հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող 7 երեխաների հաղորդակցման մակարդակը մինչ Armav AAC հավելվածով աշխատանքի մեկնարկը և նախագծի ավարտին: Ծնորհիվ գործիքի, տեղեկատվությունը համապարփակ է ու հավաստի, երեխաների հաղորդակցման մեջ գրանցված առաջընթացը՝ արժանահավատ: Մատրիցայի թարգմանությունը համաձայնեցված է եղել Հաղորդակցման մատրիցա հիմնադրամի հետ (The Communication Matrix Foundation), այն այժմ տեղադրված է հիմնադրամի կայքէջում https://communicationmatrix.org/NewTranslations/Index?fbclid=IwAR1haEjxlXi_OsDcpQeYmkInyS77jPdI6fzdn28iMfJ-sEw4ba-dnNyBJ0Q :

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այլընտրանքայյին և լրացուցիչ հաղորդակցման Armav AAC հավելվածի կիրառումից առաջ երեխայի հաղորդակցման վերաբերյալ **նախնական տեղեկատվություն արձանագրելու**, հավելվածի կիրառման **արդյունավետությունը մշտադիտարկելու**, միջամտության **վերջնարդյունքների գնահատման** նպատակով անհրաժեշտ է ունենալ գիտահենք գործիք: Այդ նպատակով կիրառվել է հուսալիության հետազոտական գնահատում անցած «Հաղորդակցման մատրիցան»:

Հաղորդակցման մատրիցան մշակվել է որպես գնահատման գործիք, որը վեր է լուծում հաղորդակցման վարքագիծը սոցիոպրագմատիկ տեսանկյունից՝ վերլուծելով էքսպրեսիվ հաղորդակցման հմտությունների կանոնավոր առաջընթացը՝ ռեֆլեքսիվ կամ չկանխամտած վարքագծից մինչև աբստրակտ սիմվոլներով ու դրանց համադրմամբ հաղորդակցում:

Չերիթի Ռոուլանդի «Հաղորդակցման մատրիցան» հետազոտման գործիք է, որը օգնում է գնահատել հաղորդակցման չորս նպատակներն և յոթ մակարդակները: Մատրիցան նախագծված է ճշգրիտ ցույց տալու, թե ինչպես է անհատը հաղորդակցվում մի քանի եղանակներով՝ խոսքի միջոցով կամ առանց խոսքի, և հնարավորություն է տալիս որոշելու հաղորդակցման նպատակները: Այս գործիքը առաջին անգամ հրատարակվել է 1990 թվականին և վերանայվել է 1996-ին և 2004-ին: Մատրիցան օգնում է գնահատել երեխայի հաղորդակցման այս պահի մակարդակը, պլանավորել հաղորդակցման զարգացմանն ուղղված գործողությունները և թիրախավորել հաղորդակցման՝ ձևավորման ենթակա նպատակները:

Մատրիցան բաղկացած է բուն մատրիցայից ու հաղորդակցման պրոֆիլից: Մատրիցան լրացնելով մասնագետը լիարժեք և ստույգ պատկերացում է կազմում երեխայի հաղորդակցման վիճակի վերաբերյալ:

Այն ներկայումս կիրառելի է որպես հաղորդակցման վարքագծի բարելավումները փաստագրելու միջոց: Մատրիցան ունի երկու տարբերակ. մեկը նախատեսված է

մասնագետների համար, մյուսը՝ ծնողների: Մասնագետների համար նախատեսված տարբերակը թարգմանված է 17 լեզուներով: Հայերեն տարբերակը թարգմանվել է Արմենուհի Ավագյանի կողմից: Այն զետեղված է հաղորդակցման մատրիցա հիմնադրամի կայքէջում https://www.communicationmatrix.org/NewTranslations/Index

Այն հասանելի է որպես գնահատման անվճար գործիք [3,4]:

Միայն 2010-2015թթ տարբեր երկրների մասնագետների կողմից ձեռք է բերվել մատրիցայի տպագիր տարբերակների մոտավորապես 20,000 օրինակ և ստեղծվել են ավելի քան 10,000 հաղորդակցման պրոֆիլներ՝ օգտագործելով առցանց տարբերակները:

Սույն հաշվետվության նպատակներն են.

(1) ներկայացնել հաղորդակցման մատրիցայի հայերեն տարբերակի պիլոտային կիրառման արդյունքները:

(2) հաստատել գնահատման այս գործիքի հուսալիությունը և նրանում ներառված հարցերի վավերականությունը:

(3) գնահատել հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող անձի հաղորդակցման նախնական վիճակը և դրա բարելավումը Armav AAC հավելվածի կիրառմամբ:

(4) ներկայացնել Armav AAC հավելվածի կիրառման դասընթացի ու դրան հաջորդած սուպերվիզիների արդյունավետությունը:

1. Հաղորդակցման մատրիցայի հայերեն տարբերակի պիլոտային կիրառման արդյունքները:

1.1. Հաղորդակցման մատրիցայի կառուցվածքը

Հաղորդակցման մատրիցան ներառում է հաղորդակցման **չորս նպատակների** և **յոթ մակարդակների** գնահատումը:
Մատրիցան օգնում է **գնահատել** երեխայի հաղորդակցման տվյալ պահի մակարդակը, **պլանավորել** հաղորդակցման զարգացմանն ուղղված գործողությունները և **թիրախավորել** հաղորդակցման՝ ձևավորման ենթակա նպատակները: Մատրիցան կօգնի հետազոտել հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող, բարդ և բազմակի (այդ թվում զգայական, շարժողական, մտավոր) խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցումը:
Մատրիցան կարող է օգտագործվել նաև.
Մեծահասակների հաղորդակցման հետազոտման համար, եթե նրանց հաղորդակցման մակարդակը համապատասխանում է վերջինիս զարգացման վաղ փուլերին:
Հաղորդակցման զարգացման հապաղման նշաններ ունեցող փոքրիկների հետազոտման համար:

Հաղորդակցման հիմնական նպատակները

Հաղորդակցումը ծառայում է հետևյալ չորս նպատակներին՝ մերժում, ստացում, սոցիալական փոխազդեցություն, տեղեկատվության փոխանցում/ստացում:

1. Անցանկալի բաների մերժում

Նույնիսկ նորածինը կարող է հասկացնել, թե ինչը իրեն դուր չի գալիս՝ սոված է, ցավ ունի, անհարմարություն է զգում: Մեծանալով, մենք անցանկալին արտահայտելու ավելի ընկալելի ձևեր ենք գտնում:

2. Ցանկալիի ստացում

Երբ մի բան մեզ դուր է գալիս, մենք ցանկանում ենք այն ստանալ կամ դրանից էլի ստանալ: Նորածինները կարող են ցույց տալ, որ տեղի ունեցողն իրենց

հաճելի է: Ավելի ուշ երեխան սովորում է, թե ինչպես պետք է մարդկանց հասկացնի իր ուզածը, եթե նույնիսկ դա դեռ չի առաջարկվել:

3. Ներգրավում սոցիալական փոխազդեցություններում

Մարդկանց մեծ մասի համար սոցիալական շփումները չափազանց կարևոր են: Նորածինները ուշադրություն գրավելու ձևերը շատ արագ սովորում են: Հետզհետե նրանք սովորում են ուշադրություն գրավելու առավել ընդունելի ձևերը:

4.Տեղեկատվության փոխանցում/ստացում

Մեծանալուն զուգահեռ երեխաները սկսում են հետաքրքրվել իրենց շրջապատով, սովորում են ինֆորմացիա հայցել, հարցեր տալ, ինֆորմացիա փոխանցել: Սովորաբար նրանց պատասխանը սահմանափակվում է «այո» և «ոչ» արտահայտելով, հարցերը լինում են պարզ, մեկնաբանությունները՝նույնպես:

Տվյալների հավաքում

Օգտագործելով դիտարկումները, ծնողների հետ հանդիպումների ժամանակ մասնագետները պետք է ձեռք բերած ինֆորմացիան պարզելու համար ուսումնասիրեն, թե ինչ վարքագիծ է երեխան դրսևորում արտահայտելու համար վիճակը (I մակարդակ), ֆունկցիաները (II մակարդակ) կամ մտադրությունները (III-VII մակարդակներ):

Գնահատումը

Մատրիցայով գնահատելիս անհրաժեշտ է տալ այն հարցերը, որոնք գրված են «Հարցրեք» սյունակում: Եթե պատասխանն «այո» է, շրջանի մեջ է վերցվում այն տառը, որը համապատասխանում է վարքագծին ու նշված է «Պատասխանեք այստեղ» սյունակում: Անհրաժեշտ է ստուգել այն վարքագծերը, որոնք երեխան դրսևորում է **ինքնուրույն և հետևողականորեն:**

Հարցերի մեծ մասի դեպքում հնարավոր է գտնել հաղորդակցման տարբեր մակարդակներին համապատասխանող պատասխաններ: Երեխաների մեծ մասին բնորոշ է հաղորդակցման տարբեր մակարդակների դրսևորումներ ունենալը: Օրինակ՝ երեխան կարող է ցանկալի առարկա ստանալու համար արտասանել բառը՝ «ձողիկ» (VI մակարդակ), փոխանցել գնահատողին ցանկալի առարկայի նկարը (V մակարդակ) և մատնացույց անել տվյալ առարկան (IV մակարդակ):

Յուրաքանչյուր հատվածում բոլոր հարցերը անհրաժեշտ է կարդալ վերից վար: Եթե երեխայի հաղորդակցման մակարդակը բարձր է, պետք է բաց թողնել նախորդ մակարդակներում նշումներ կատարելն ու միանգամից անցնել առավել բարձր մակարդակներին:

I մակարդակ՝մտադրություն չարտահայտող վարքագիծ

Ռեֆլեքսիվ կամ չկանխամտածված վարքագիծ, որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ընկալվում է խնամակալի կողմից:

II մակարդակ՝ մտադրություն արտահայտող վարքագիծ

Վարքագծի մեջ արտացոլվում է մտադրություն: Երեխան դեռ չի գիտակցում, որ այդ վարքագիծը կարող է օգտագործվել ուրիշի վարքագծի վրա ազդելու համար: Այնուամենայնիվ, վարքագիծը կատարում է հաղորդակցական գործառույթ, ուղղված է խնամակալին, ով կարող է ենթադրություններ անելով արձագանքել: Այս մակարդակում, նախքան հաղորդակցական վարքագիծ դրսևորելը, երեխաները չեն հաստատում աչքի կոնտակտ, չեն սպասում մեծահասակների արձագանքին: Երեխաները ոչ թե դիմացինի ուշադրությունը գրավելու ուղղակի փորձեր են անում, այլ փորձում են ուղիղ ազդեցություն ունենալ առարկաների վրա:

III մակարդակ՝ ոչ սովորական / ոչ ավանդական հաղորդակցում՝ նախասիմվոլային վարքագծով

Սա կարևոր փուլ է: Երեխայի հաղորդակցական վարքագիծը պարունակում է մտադրություն, բայց եղանակը, որով նա հաղորդակցման փորձեր է կատարում սովորական/ավանդական չէ: Երեխան ձայներ է արձակում, մարմնով շարժումներ է կատարում: Ոչ սովորական ժեստերը օգտագործվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ: Վարքագիծը կոչվում է ոչ սովորական/ոչ ավանդական, քանի որ դրանք մեծահասակների համար չեն հանդիսանում ընդունված միջոց: Չնայած այս վարքագիծը չափազանց արդյունավետ է, այն սովորաբար փոխարինվում է ավելի սովորական/ավանդական միջոցներով, օրինակ՝ ժեստերով, ձայնարձակումներով:

IV մակարդակ՝ սովորական/ ավանդական հաղորդակցում

Խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ երեխան օգտագործում է սոցիալապես ընդունելի ժեստեր ու ձայնարձակումներ: Ընդունված ժեստերը մարդուն ուղեկցում են ողջ հետագա կյանքում՝ հանդիսանալով հաղորդակցման լրացուցիչ միջոց: Երեխան ցուցաբերում է «կրկնակի կողմնորոշում»՝ ինչ-որ մեկին նայելով ինչ-որ բան է «ասում»: Կոչվում է «կրկնակի կողմնորոշում», քանի որ երկու միջոց համադրվում է՝ հայացք և ժեստ:

V մակարդակ՝ որոշակի սիմվոլներ

Այս մակարդակում երեխան ունակ է կիրառելու կոնկրետ սիմվոլներ, կոնկրետ ասելիք հասկացնելու համար: Դրանցից են ժեստերը՝ տուր, արի, իրական առարկաները մատնացույց անելը: Այդ կոնկրետ սիմվոլները շրջապատի առարկաների հետ երկկողմանի կապ ունեն. նախ դրանք առարկայի հստակ խորհրդանիշն են, հետո ասոցացվում են տվյալ առարկայի հետ՝ տեսքով, արձակած ձայնով: Այս փուլը կարող են բաց թողնել բնականոն զարգացող երեխաները, սակայն հաղորդակցման ծանր խնդիրների դեպքում այն կարող է երեխային ուղեկցել ողջ կյանքում՝ երբեմն մնալով որպես հաղորդակցման միակ տարբերակ:

VI մակարդակ՝ աբստրակտ սիմվոլներ, որոնք խորհրդանշում են կոնկրետ առարկաներ

Այս մակարդակում երեխան կիրառում է աբստրակտ սիմվոլներ, որոնց վերաբերվում է նաև խոսքը, մատնախոսությունը, Բրայլյան գիրը, գրավոր խոսքը, գրաֆիկական սիմվոլները, եռաչափ սիմվոլները: Այս փուլում երեխան սիմվոլներն օգտագործում է առանձին-առանձին, առանց դրանք համադրելու: Այլընտրանքային հաղորդակցման միջոցներից օգտվող երեխան նույնն անում է իր սարքով կամ հաղորդակցման գրքով:

VII մակարդակ՝ սիմվոլների համադրում

Այս մակարդակում երեխան համադրում է 2-3 սիմվոլ (ներառյալ բառ)՝ պահպանելով լեզվի շարահյուսությունն ու քերականական կանոնները: Հաղորդակցման ծանր խանգարումների ժամանակ երեխան կարող է այս նպատակով օգտագործել ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոց:

1.2 Մատրիցայի հայերեն տարբերակի կիրառումը

Մատրիցան հայերեն թարգմանվելուց հետո գնահատվել է երեք լոգոպեդ փորձագետների կողմից: Հետադարձ թարգմանության միջոցով գնահատվել է նրա հուսալիությունը պրոֆեսիոնալ թարգմանչի կողմից: Այնուհետև մատրիցայի վերանայված վերջնական տարբերակը կիրառվել է յոթ մասնագետների կողմից իրենց այցելուների հաղորդակցման մակարդակը գնահատելու համար՝ որպես հայերեն լեզվով մատրիցայի նախնական պիլոտային փորձարկում՝ նախքան դրա լայն կիրառությունը կլինիկական և կրթական միջավայրում աշխատող մեծ թվով մասնագետների կողմից: Պիլոտային հետազոտությունը հնարավորություն տվեց վերջնականապես հստակեցնել հաղորդակցման մատրիցայի հայերեն տարբերակի կիրառման հուսալիությունը և ներառված հարցերի վավերականությունը:

Յունիսեֆ Հայաստանի հետ գործընկերության շրջանակներում Մատիրցան ներկայացվել է յոթ մասնագետների, ովքեր մեկական այցելուի հետ աշխատել են չորս ամիս շարունակ: Բոլոր այցելուները ունեցել են հաղորդակցման լուրջ դժվարություններ: Նրանցից չորսը եղել է տղա, երեքը՝ աղջիկ: Մասնագետները երեխաների հետ աշխատել են Արմավ AAC հավելվածով և աշխատանքի մեկնարկից առաջ, ապա ընթացքում և վերջում մատրիցայի օգնությամբ գնահատել են երեխաների հաղորդակցական հմտությունները: Յոթ մասնագետների կողմից հաղորդակցման լուրջ դժվարությունն ունեցող մեկական այցելուի հետ աշխատանքում մատրիցայի կիրառման արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Մատրիցայով կրկնակի գնահատումների տվյալները[1]

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ	Այցելուներ (6-11 տարեկան)							ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՅՈԹ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ
	Էլ.	Գմ.	Ատ.	Արտ.	Գվ.	Կն.	Ռբ.	
Անցանկալին մերժելու ուղիներ	0/2/2	0/0/2	5/7/9	2/2/2	3/4/4	1/ 2/2	2/2/2	1. Մինչմտադրային մակարդակ
	0/2/2	0/0/1	4/6/8	2/2/2	5/5/5	2/ 4/4	2/2/2	2. Մտադրային
	0/2/2	1/1/ 2	5/5/5	1/1/1	5/5/5	0/0/0	3/3/3	3. Անսովոր հաղորդակցում
	0/1/1	0/0/0	1/2/2	2/2/2	2/3/3	2/4/4	2/2/2	4.Պայմանական հաղորդակցում
	0/2/2	0/0/0	0/0/0	0/0/0	0/1/1	0/0/0	1/1/1	5. Կոնկրետ սիմվոլներ
	0/0/0	0/0/0	0/2/5	0/2/2	1/2/2	0/0/0	0/1/1	6.Աբստրակտ սիմվոլներ
	0/0/0	0/0/0	0/0/1	0/1/1	0/0/0	0/0/0	0/1/1	7.Լեզու
Ցանկալին ստանալու ուղիներ	0/0/2	1/1/1	2/3/5	1/1/1	2/2/2	2/2/2	1/1/1	1. Մինչմտադրային մակարդակ
	4/5/5	1/ 2/2	4/14/20	5/9/9	10/10/10	2/2/2	2/4/4	2. Մտադրային

[1]

	11/16/16	0/2/2	4/14/15	14/14/14	8/25/25	11/11/11	2/2/2	3. Անսովոր հաղորդակցում
	15/15/15	0/0/0	0/1/1	0/0/0	1/11/11	0/0/0	2/2/2	4.Պայմանական հաղորդակցում
	0/0/3	0/1/1	0/5/10	0/8/8	0/0/0	0/0/0	0/8/8	5. Կոնկրետ սիմվոլներ
	0/0/0	0/0/0	0/4/6	0/15/15	0/0/0	0/0/0	0/5/5	6.Աբստրակտ սիմվոլներ
	0/0/0	0/0/0	0/0/4	0/12/12	0/0/0	0/0/0	0/0/0	7.Լեզու
Սոցիալական փոխազդեցությա ն մեջ ներգրավվելու ձևեր	3/3/3	0/1/1	0/1/2	1/1/1	3/3/3	1/1/1	1/1/1	1. Մինչմտադրային մակարդակ
	1/1/1	1/ 2/2	0/1/3	3/3/3	4/4/4	2/2/2	2/2/2	2. Մտադրային
	1/1/1	2/4/4	3//6/13	4/4/4	0/8/8	2/2/2	5/5/5	3. Անսովոր հաղորդակցում
	6/6/6	1/3/3	0/9/14	3/6/6	0/0/0	0/0/0	1/1/1	4.Պայմանական հաղորդակցում
	0/2/2	0/0/0	0/1/1	0/0/0	0/0/0	0/0/0	0/0/0	5. Կոնկրետ սիմվոլներ
	0/0/2	0/0/0	0/0/1	0/2/2	0/0/0	0/0/0	0/2/2	6.Աբստրակտ սիմվոլներ
	0/0/0	0/0/0	0/0/0	0/4/4	0/0/0	0/0/0	0/0/0	7.Լեզու
Ինֆորմացիա տրամադրելու								1. Մինչմտադրային մակարդակ
								2. Մտադրային

կամ ստանալու ուղիները								3. Անսովոր հաղորդակցում
	0/0/0	0/1/1	0/2/2	2/2/2	2/2/2	0/0/0	0/0/0	4.Պայմանական հաղորդակցում
	1/3/3	0/0/0	0/1/5	1/ 2/2	0/2/2	0/0/0	1/1/1	5. Կոնկրետ սիմվոլներ
	1/1/3	0/0/0	0/2/4	0/2/2	0/1/1	0/0/0	0/1/1	6.Աբստրակտ սիմվոլներ
	0/0/1	0/0/0	0/0/1	0/4/4	0/0/0	0/0/0	0/0/0	7.Լեզու

***Այցելուների անունները նշված են պայմանական տառերով*: *Յուրաքանչյուր այցելուի համար համապատասխան վանդակում նշված են կոմպետենցիաների յոթ տարբեր մակարդակներին համապատասխան նախնական/միջանկյալ/վերջնական գնահատման միավորները՝ ըստ հաղորդակցման հիմնական նպատակի:**

Մատրիցայի օգնությամբ մասնագետները կարողացել են նաև սահմանել երեխայի հետ հետագա միջամտության նպատակները: Օրինակ՝ Եթե գրանցվում է հաղորդակցման երկրորդ մակարդակ, ապա միջամտության նպատակները սահմանելիս մասնագետը օգտվում է չորրորդ մակարդակի վանդակում ներկայացված կողմնորոշիչներից (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Հաղորդակցման յոթ մակարդակները և մասնագիտական միջամտության նպատակները

Մակարդակ	Լուռ վարքագիծ	Միջամտության նպատակներ
1. Մինչմտադրային մակարդակ	Մինչմտադրային կամ ռեֆլեքսիվ վարքագիծը արտահայտում է երեխայի վիճակը՝ թաց, սովածության զգացում, քնելու ցանկություն: Այս դեպքում դրանց	Ձևավորել նպատակին ծառայող վարքագիծ՝ ստեղծելով երեխայից եկող ազդակների նկատմամբ զգայուն միջավայր:

	բավարարումը լիովին կախված է խնամակալից:	
2. Մտադրային	Վարքագիծը մտադրային է, բայց ոչ միշտ է ուղղված հաղորդակցվելու մտադրությանը: Վարքագիծն ուղղված է խնամակալին որոշակի գործողությունների դրդելուն:	Արձագանքել հաղորդակցման մտադրությամբ վարքագծերին, որպեսզի երեխան պատկերացնի իր՝ հաղորդակցմանն ուղղված վարքագծերի նպատակը:
3. Անսովոր հաղորդակցում	Անսովոր ժեստերը օգտագործվում են՝ խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ:	Անսովոր ժեստերը հետզհետե փոխահինել ընդունված ժեստերով կամ անցնել նկար/սիմվոլների կիրառմանը:
4.Պայմանական հաղորդակցում	Սովորական/ընդունված ժեստերը կիրառվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու նպատակով:	Սովորեցնել առարկաների և դրանք խորհրդանշող սիմվոլների (կոնկրետ և աբստրակտ) համապատասխանությունը
5. Կոնկրետ սիմվոլներ	Սպեցիֆիկ առարկաների/երևույթների և դրանք խորհրդանշող սիմվոլների միջև համապատասխանության ոչ լիարժեք պատկերացում և սահմանափակ կիրառում:	Սովորեցնել առարկաների և դրանք խորհրդանշող աբստրակտ սիմվոլների համապատասխանությունը:
6.Աբստրակտ սիմվոլներ	Երևույթները խորհրդանշող աբստրակտ սիմվոլների սահմանափակ կիրառում: Հաղորդակցման համար կիրառում է մեկ	Սովորեցնել համադրել 2-3 սիմվոլ և կազմել արտահայտություն:

	սիմվոլ:	
7.Լեզու	Սիմվոլի կանոններով պայմանավորված օգտագործման համակարգ: Պատվիրված համակցություններ երկու կամ երեք նշաններից ըստ շարահյուսական կոնվենցիաների: 2-3 սիմվոլի շարահյուսորեն ճիշտ համադրություն:	Ընդլայնել ճիշտ շարահյուսությամբ արտահայտվելու ունակությունները:

1.3. Հաղորդակցման պրոֆիլի և գնահատման արդյունքների մեկնաբանումը

Դիտելով մատրիցայի նշված հատվածները հնարավոր է պատկերացում կազմել, թե հետազոտվողը ինչպե՞ս է զարգանում՝ բնականոն զարգացող երեխայի համեմատ, և, ինչն է առավել կարևոր: Ըստ մատրիցայի տվյալների հնարավոր է պատկերացում կազմել այն մասին, թե երեխայի որ կարողությունները զարգացնելու կարիք ունեն: Մատրիցայի յուրաքանչյուր բաժին բաղկացած է ենթակետերից/հարցերից, որոնք մասնագետները նշում են «Այո» կամ «Ոչ» պատասխաններով: Պատասխանները վերաբերվում են հաղորդակցման վարքագծի ենթատեսակներին, որոնք մասնագետը նշում է մատրիցայում: Հարցերի խմբերը համապատասխանեցված են տարբեր հաղորդակցման մակարդակների:

Այս պիլոտային հետազոտությանը մասնակցել է յոթ մասնագետ: Նրանք իրարից անկախ ներկայացրել են իրենց այցելուների պարբերական գնահատման տվյալները: Այս պիլոտային հետազոտությունը իրենից ներկայացնում է դեպքերի շարք, որում գնահատվել է հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող 4-10 տարեկան յոթ երեխաների հաղորդակցման մակարդակը: Երեխաներից 4-ը տղա է, 3-ը՝ աղջիկ: Մատրիցայի միջոցով գնահատումը անց է կացվել 2023 թվականի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսներին, որոնց ընթացքում յուրաքանչյուր մասնագետ մատրիցայի օգնությամբ երկուսից երեք անգամ գնահատել է երեխայի հաղորդակցման մակարդակը (նախնական, միջանկյալ և վերջնական գնահատում): Յուրաքանչյուր այցելուի միավորը տվյալ հարցի համար հաշվարկվել է հաղորդակցման որոշակի մակարդակում (1-7) նշված ենթակետերի թվով, որոնց դինամիկան եռակի գնահատման գործընթացում վկայում է հաղորդակցման մակարդակի բարելավման կամ հաղորդակցման դժվարությունների նվազման մասին: Բոլոր երեխաների համար գնահատման միավորները աճել կամ մնացել են անփոփոխ, ինչը հստակ երևում է տարբեր մակարդակների համար նշված երեք միավորների փոփոխությամբ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հաղորդակցման գնահատման մատրիցան հուսալի միջոց է երեխայի մոտ հաղորդակցման գնահատման և թիրախային միջամտությունների մշակման համար:

Մատրիցան օգնում է սահմանել հաղորդակցման զարգացման կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակները: Հետազոտվողի համար սահմանվում է միջամտության ունիվերսալ նպատակ (հաղորդակցման թիրախավորվող մակարդակի վերաբերյալ) և միջամտության յուրահատուկ նպատակներ (հաղորդակցման վարքագծի դրսևորման կամ մտադրության վերաբերյալ): Եթե երեխան տվյալ մակարդակում ունի հաղորդակցման դեռևս չձևավորված վարքագծեր, մասնագետը պետք է որոշում կայացնի, և նպատակներ սահմանելիս շարունակի մնալ տվյալ մակարդակում՝ զարգացնելով բացակայող վարքագծերը, կամ անցնի այլ մակարդակի: Այս որոշումը բխում է հետազոտվողի շարժողական, զգայական, խոսքային առանձնահատկություններից: Կարող են լինել դեպքեր, երբ անհնար է ձևավորել տվյալ մակարդակի բոլոր վարքագծերը: Այս դեպքում հետազոտողը պլանավորում է և անցում հաջորդ մակարդակին: Պլանավորումը կարող է ներառել նոր մոտեցումներ (խոսքով կամ այլընտրանքային հաղորդակցման որևէ տարբերակով), որոնց կարիքը հետազոտվողն ունի:

Մատրիցայով գնահատման թիրախը ոչ միայն հաղորդակցման վարքագծերի փոփոխության և դրա բարելավման գնահատումն է, այլ նաև հաղորդակցման կոմպետենցիաների բարալավման դինամիկայի վերահսկումը: Այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման մեթոդների կիրառման նպատակն է բարելավել այդ կոմպետենցիաները՝ մինչմտադրային մակարդակից մինչև լեզվական (Մինչմտադրային մակարդակ – Մտադրային - Անսովոր հաղորդակցում - Պայմանական հաղորդակցում - Կոնկրետ սիմվոլներ - Աբստրակտ սիմվոլներ – Լեզու):

Պիլոտային ծրագրում մասնակցած լոգոպեդները երեխաների հետ աշխատել են Armav AAC հավելվածի միջոցով և գնահատել են արդյունքերի դինամիկան հաղորդակցման մատրիցայի միջոցով: Եթե Աղյուսակ 1-ում ներկայացված յուրաքանչյուր առանձին վանդակում տվյալների հորիզոնական վերլուծությունը ցույց է տալիս հաղորդակցման վարքագծերի բարելավման դինամիկան, որը բնորոշ է կոնկրետ հաղորդակցման նպատակին, ապա ուղղահայաց դիտարկումն ակնհայտ է դարձնում կոմպետենցիաների բարելավումը: Աղյուսակում ձախից աջ երեք միավորներից երրորդը վերջնական գնահատման միավորն է, որը ավելանում

է բոլոր մասնակիցների մոտ առաջինից երրորդ գնահատման ընթացքում: Մասնակիցներից ոմանք գրեթե չեն հասնում 6-րդ և 7-րդ մակարդակի կոմպետենցիաներին, որի արդյունքում համապատասխան վանդակներում միայն զրոներ են գրանցված, ինչը պայմանավորված է երեխաների կոմպետենցիաների գնահատման նախնական ցածր մակարդակով: Սակայն հաղորդակցման բոլոր հիմնական նպատակները գնահատելիս նկատվում է կոմպետենցիաների աճ և դրանց տեղափոխում ավելի բարձր մակարդակի վրա: Աղյուսակից հստակ երևում է, որ բացառությամբ «Ինֆորմացիա տրամադրելու կամ ստանալու ուղիներ» հաղորդակցման նպատակից, մնացած բոլոր երեք նպատակների համար բոլոր մասնակիցների մոտ 5-7-րդ մակարդակում առաջին գնահատման արդյունքը 0 միավոր է: Կարևոր է այն առանձնահատկությունը, որ կոմպետենցիաների բարելավումը 5-7րդ մակարդակներում սկսվում է հիմնականում 0-ից, հասնելով առանձին դեպքերում մինչև 8 միավորի:

Գծապատկերները ներկայացնում են 1-7 մակարդակներում գրանցված փոփոխությունները բոլոր 7 այցելուների համար ըստ կրկնակի գնահատման արդյունքում յուրաքանչյուր մակարդակում գրանցված արժեքի դրական տեղաշարժի, որոնք գրանցվել են 4 տարբեր նպատակների համար

1. Անցանկալին մերժելու ուղիներ	2. Ցանկալին ստանալու ուղիներ	3. Սոցիալական փոխազդեցության մեջ ներգրավվելու ձևեր	4. Ինֆորմացիա տրամադրելու կամ ստանալու ուղիները
			
			
			


Այցելու Արտ.
2.5
2
1.5
1
0.5
0
1 2 3 4 5 6


Այցելու Արտ.
16
14
12
10
8
6
4
2
0
1 2 3 4 5


4.5
4
3.5
3
2.5
2
1.5
1
0.5
0
1 2 3 4 5 6


Այցելու Արտ
2.5
2
1.5
1
0.5
0
1 2 3 4 5 6


Այցելու Գվ.
1.2
1
0.8
0.6
0.4
0.2
0
1 2 3 4 5 6


Այցելու Գվ.
18
16
14
12
10
8
6
4
2
0
1 2 3 4 5 6


Այցելու Գվ.
9
8
7
6
5
4
3
2
1
0
1 2 3 4 5 6


Այցելու Գվ.
2.5
2
1.5
1
0.5
0
1 2 3 4 5 6


Այցելու Կն.
2.5
2
1.5
1
0.5
0
1 2 3 4 5 6


Այցելու Կն.
1.2
1
0.8
0.6
0.4
0.2
0
1 2 3 4 5 6


Այցելու Կն.
1.2
1
0.8
0.6
0.4
0.2
0
1 2 3 4 5 6


Այցելու Կն.
1.2
1
0.8
0.6
0.4
0.2
0
1 2 3 4 5 6


Այցելու Ռք.
1.2
1
0.8
0.6
0.4
0.2
0
1 2 3 4 5 6


Այցելու Ռք.
9
8
7
6
5
4
3
2
1
0
1 2 3 4 5 6


Այցելու Ռք.
2.5
2
1.5
1
0.5
0
1 2 3 4 5 6


Այցելու Ռք.
1.2
1
0.8
0.6
0.4
0.2
0
1 2 3 4 5 6

2. Armav AAC հավելվածի կիրառման դասընթացի ու դրան հաջորդած սուպերվիզիների արդյունավետությունը:

Նախագծի բոլոր մասնակից մասնագետները մասնակցել են Armav AAC հավելվածի կիրառման դասընթացին, որն անցկացրել են լոգոպեդներ **Արմենուհի Ավագյանը** (*Armav AAC* հավելվածի համահեղինակ, մանկ.գիտ.թեկ., դոցենտ, լոգոպեդ) և **Թալին Աշիքեանը** (*M.S., CCC-SLP/ASDCS, PhD* թեկնածու, Հարմոնի խոսքի և ախտորոշման կենտրոնի համահիմնադիր (Կալիֆորնիա, ԱՄՆ), *Armav AAC* հավելվածի արևմտահայերեն տարբերակի նախաձեռնող):

Դասընթացները եռօրյա էին ու ներառում էին համապարփակ տեղեկատվություն հաղորդակցման գնահատման, այլընտրանքային հաղորդակցման բարձր տեխնոլոգիական միջոցների կիրառման, MASTER PAL մեթոդաբանության վերաբերյալ: Դրանք հագեցած էին տեսական և գործնական գիտելիքներով, տեսանյութերով, խմբային աշխատանքներով ու փորձարկումներով:

Դասընթացներին հաջորդեցին ամիսը մեկ անգամ տեղի ունեցող առցանց **սուպերվիզիաները:** Սուպերվիզիաներն անցկացվում էին նույն դասընթացավարների կողմից: Յուրաքանչյուր մասնագետ ընտրել էր մեկ այցելուի, ում հետ աշխատանքը ընթանում էր դասընթացավարների հսկողությամբ ու խորհուրդներով: Սուպերվիզիաներին նախորդում էր երեխայի հետ աշխատանքը ցուցադրող տեսանյութերի պատրաստումը: Դրանք նախապես ուղարկվում էին դասընթացավարներին: Վերջիններս մշակել էին սուպերվիզիաների ռուբրիկ, որով բաժին առ բաժին գնահատում էին մասնակիցների աշխատանքի հստակությունը:

Մասնավորապես, գնահատվում է մատրիցայի լրացումը, հավելվածի ֆունկցիաների կիրառումը, մոդելավորումը, մասնագետը որպես հաղորդակցման գործընկեր, միջավայրային գործոնները, հարգանքը երեխայի նկատմամբ/ազատության տրամադրում, օգնության/հուշման տրամադրումը, անցումը նախադասությամբ խոսելուն:

Յուրաքանչյուր սուպերվիզիայի ավարտին մասնակիցները ստանում էին խորհուրդներ, ցուցումներ: Դրանք իրենց էին ուղարկվում նաև էլեկտրոնային նամակով:

Վերջում դասընթացավարների կողմից պատրաստվեց դասընթացի/դասընթացավարների գնահատման ձևաթուղթ, որը ուղարկվեց մասնակիցներին: Ձևաթղթերի վերլուծությունը վկայեց, որ դասընթացի ու սուպերվիզիաների մասնակիցները չափազանց բարձր էին գնահատում նշված ֆորմատով աշխատանքը:

Մասնավորապես, մի մասնակից գրում է՝ «Շատ օգտակար էր ողջ տեղեկատվությունը, մանավանդ՝ տեղեկությունը հաղորդակցման մակարդակների, հաղորդակցման գնահատման մատրիցայի, հաղորդակցումը խոսքային, բարձր և ցածր տեխնոլոգիական միջոցների համադրության վերաբերյալ»:

Մեկ այլ մասնակից նշում է. «Շատ արդյունավետ աշխատանք էր. նախ տեսական գիտելիքի փոխանցումը, ապա օնլայն սուպերվիզիաները Քննարկվում էր տեսահոլովակների յուրաքանչյուր մանրուք և տրվում էին համապատասխան ցուցումներ: Կառաջարկեի, որ ծրագիրը կրեր շարունակական բնույթ: Քանի որ շահառու երեխան հաճախում է դպրոց և իր հետ աշխատում են ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, այլ մասնագետներ, ցանկալի կլիներ, որ նրանք ծրագրի մասին իրազեկվեին կամ վերապատրաստվեին»:

Սուպերվիզիաներին մասնակցում էին նաև երեխաների հետ առնչվող այլ մասնագետները, ուսուցիչները, ծնողները: Նրանք նույնպես ներկայանում էին Armav AAC հավելվածի կիրառման տեսանյութով, ցուցադրում էին դրա կիրառումը իրենց պարապմունքների, կենցաղային աշխատանքներ կատարելու, գնումներ կատարելու գործընթացում:

Դասընթացավարները փաստում են մասնագետների մասնագիտական մեծ աճը, բարձր տեխնոլոգիաների իրենց աշխատանքում առավել լայնորեն ու արդյունավետորեն կիրառելու փաստը:

Այսպիսով դասընթացի այս ձևաչափը միանշանակ արդարացրեց ակնկալիքները և ապահովեց բարձր արդյունավետություն:

Եզրակացություն

1. Հաղորդակցման մատրիցայի հայերեն տարբերակի արժեքը մասնագիտական միջամտության պրակտիկայում ակնհայտ է: Մատրիցան կընձեռնի լայն հնարավորություններ մեծաքանակ հետազոտական և կլինիկական տվյալներ գրանցելու հաղորդակցման հմտությունների վաղ, բազմաբնույթ խանգարումների վերաբերյալ, որոնք թույլ կտան բնորոշել հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող երեխաների էքսպրեսիվ հաղորդակցման զարգացումը: Այս նպատակի համար իդեալական գործիք կարող է լինել մատրիցայի առցանց տարբերակը:
2. Նման տվյալների բազաները մասնագետներին հնարավորություն կտան խորությամբ հասկանալ ինչպես նախախոսքային հաղորդակցման զարգացումը, այնպես էլ սիմվոլների վրա հիմնված հաղորդակցման ձևավորումը, ստեղծելով գիտագործնական հիմք, որով հնարավոր է գնահատել հաղորդակցվել սովորող երեխաների հաջողության մակարդակը:
3. Մատրիցայի կիրառությունը հնարավորություն կտա լոգոպեդներին ունենալ վավերացված գնահատման գործիք, որը լիարժեք գնահատում է հաղորդակցման հմտությունների ձևավորումը կամ վերականգնումը և կարող է կիրառվել բազմամասնագիտական թիմի կողմից միջամտությունը վերահսկելու նպատակով: Հաղորդակցման մատրիցան շատ պարզ կերպով է ներկայացնում գնահատման տվյալները, որոնք հասկանալի են բազմամասնագիտական թիմի բոլոր անդամների համար:
4. Մատրիցան կիրառելը շատ դյուրին է նաև ծնողների համար, ովքեր կարող են լիարժեք և կարևոր ինֆորմացիա տրամադրել մասնագետներին՝ որոշումներ կայացնելու համար: Անհերքելի, որ մատրիցան մասնագետներին, ծնողներին և գործընկերներին տրամադրում է փաստագրված տվյալներ երեխաների հաղորդակցման բարելավման վերաբերյալ:
5. Դասընթացի ձևաչափը **աննախադեպ էր Հայաստանում**. առաջին անգամ այս ոլորտում դասընթացներին հաջորդել էր մասնագիտական շարունակական աջակցություն՝ պարբերական սուպերվիզիաներ: Մանսագետները և դասընթացավարները փաստում են մասնագետների կարողունակությունների մեծ աճը, բարձր տեխնոլոգիաների իրենց աշխատանքում առավել լայնորեն ու արդյունավետորեն կիրառելու փաստը:

6. Armav AAC հավելվածի միջոցով աշխատած մասնագետների աշխատանքի արդյունքների գնահատումը հաղորդակցման մատրիցայի միջոցով վկայում է, որ

- առկա է հաղորդակցման վարքագծերի բարելավման դինամիկան, որը բնորոշ է կոնկրետ հաղորդակցման նպատակին, ապա ուղղահայաց դիտարկումն ակնհայտ է դարձնում կոմպետենցիաների բարելավումը:
- հաղորդակցման բոլոր հիմնական նպատակները գնահատելիս նկատվում է կոմպետենցիաների աճ և դրանց տեղափոխում ավելի բարձր մակարդակի վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երեխաների հաղորդակցումը գնահատել հաղորդակցման մատրիցայով՝ խուսափելով մոտավոր գնահատումներից:
2. Հաղորդակցման մատրիցան, որպես հաղորդակցման լուրջ դժվարությունների գնահատման հավաստի տեղեկատվություն տրամադրող գործիք ներկայացնել համապատասխան հաստատություններին՝ գործածության շրջանակը ընդլայնելու նպատակով:
3. Դասընթացի փորձարկված ձևաչափը ընդունել որպես նախադեպ ու տարածել:

Գրականություն

1. C. Rowland, *Communication Matrix*. *Especially for Parents*, Oregon Health and Science University, Design to Learn Projects, Oregon, 2004b.
2. C. Rowland, *Matriz de Comunicaci´on*. *Especial Para Padres,* Oregon Health & Science University, Design to Learn Projects, Oregon, 2006.
3. C. Rowland, *Online Communication Matrix*, Oregon Health & Science University, Design to Learn Projects Website: http://communicationmatrix.org, 2009a.
4. C. Rowland, *Matriz de Comunicaci´on en Internet*, Oregon Health & Science University, Design to Learn Projects Website: http://matrizdecomunicacion.org, 2009b.
5. L. Holte, J. G. Prickett, D.C. Van Dyke, R.J Olson, P. Lubrica, C.D. Knutson, J.F. Knutson and S. Brennan, Issues in the evaluation of infants and young children who are suspected of or who are deafblind, *Infants and Young Children* **19** (2006), 213–227.

6. M.J. Buzolich, Communication sampling and analysis, *Perspectives on Augmentative and Alternative Communication* **18** (2009), 88–95
7. L. A. Proctor and J. Oswalt, Augmentative and alternative communication assessment in the schools, *Perspectives on Augmentative and Alternative Communication* **17** (2008), 13–19.

Հավելված

Հավելված 1. Աղյուսակների ու գծապատկերների ցանկ

Աղյուսակ 1. Մատրիցայով կրկնակի գնահատումների տվյալները

Աղյուսակ 2. Հաղորդակցման յոթ մակարդակները և մասնագիտական միջամտության նպատակները

Հավելված 2. Արմավ դասընթացի և սուպերվիզիաների գնահատման ձևաթուղթ

Դասընթացավարներ - Արմենուհի Ավագյան և Թալին Աշիքեան

Դասընթացի ամսաթիվ----------

Ինչպիսի՞ն էր նյութի ներկայացումը:

	Գերազանց	Շատ լավ	Լավ	Վատ	Շատ վատ
Ծավալը և մոդուլյացիան					
Արդյունավետություն					
Էնտուզիազմ					
Մարմնի լեզու					

Լեզվի և խոսքի հստակություն					
Ներգրավող					
Հեշտ է հետևել					
Ներկայացնողը պատրաստ է					
Տեսողական միջոցների բովանդակությունը արդյունավետ է					
Նախատեսված ներկայացումը կատարվել է ժամանակին					
Հարցերին պատասխանեց բանախոսը					

• Ունե՞ք որևէ դիտողություն, առաջարկ կամ կարծիք ներկայացման վերաբերյալ:

• Որո՞նք են ամենաօգտակար տեղեկատվությունը, որ ստացաք այս դասընթացից:

• Այս դասընթացը խորհուրդ կտա՞ք ձեր ընկերներին կամ գործընկերներին:

Այո Ոչ

• Այս դասընթացը ընդհանուր գնահատականը (1-ը ամենացածրն է, իսկ 10-ը՝ ամենաբարձրը)

• Նախատեսու՞մ եք ներկա գտնվել այս դասընթացավարների ապագա սեմինարների:

Այո Ոչ